ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2015Թ.-Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2015թ.-ի տարեկան ծրագրի շրջանակներում ներքին աուդիտի բաժնի կողմից նախատեսվել և իրականացվել է 23 աուդիտ, որից 8 միավոր մարզային ենթակայության Հանրակրթական ՊՈԱԿ-ներում; 6 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ներում, 9 միավոր մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներում:ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ներում իրականացվել է ֆինանսական աուդիտ ,մարզպետարանի աշխատակազմում՝ գնումների գործընթացի գնումների օրենսդրությանը համապատասխանության աուդիտ և ստորաբաժանումների գործունեության ոլորտը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության աուդիտ:Նշված ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ներում և մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներում աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները :Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը,գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները: Հրավիրվել է Ներքին աուդիտի կոմիտեի 5 նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները,կայացվել համապատասխան որոշումներ :Աուդիտի ենթարկված ՊՈԱԿ-ների,առողջապահական ՓԲԸ-ների և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին տրվել են հանձնարարականներ,ներկայացվել առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ:Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է վերահսկողության գործընթաց:

Աուդիտի հաշվետվությունները տեղադրվել են Վայոց ձորի մարզպետարանի vdzor.gov.am պաշտոնական կայքում ստուգումների արդյունքներ բաժնում:

Ներքին աուդիտի բաժնի կողմից ամբողջությամբ կատարվել է 2015 թ.-ի առաջին կիսամյակի ներքին աուդիտի ծրագիրը:

Հաշվետվությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի, ծրագրային մուտքագրմամբ ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան